

**ԿՈՄԻՏԱՍ.
ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(Նախաբանի փոխարեն)**

Կոմիտասը հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրն է: Հարկ է նկատել, որ այն առաջին ազգային կոմպոզիտորական դպրոցն էր արևելյան մշակույթների մեջ: Այս է նրա դերը հայ երաժշտության պատմության մեջ: Եթե փորձենք դիտարկել ձևակերպումը, ապա ստիպված կլինենք անդրադառնալ հայ իրականության մեջ եվրոպական կոմպոզիտորական ավանդույթի ներթափանցման և ազգային երաժշտական ավանդույթների հիման վրա դրա ադապտացման գործընթացներին:

Հայ կոմպոզիտորական արվեստի մասին խոսելիս՝ հասկանալի է, որ նկատի պետք է ունենայինք հայ երաժշտական մշակույթի պրոֆեսիոնալ ավանդույթների նորովի վերաիմաստավորման, վերակազմակերպման մի գործընթաց: Հայ պրոֆեսիոնալ երաժշտության պատմության արմատները կարելի է փնտրել դեռևս նախաքրիստոնեական շրջանի մեհենական – տաճարային արվեստում, իսկ միջնադարից այն վկայված է հայ եկեղեցական երաժշտական մշակույթի բազմաթիվ արտահայտություններով: XVIII դարից հայ երաժշտատեսական մտքի մեջ երևում են եվրոպական երաժշտության տեսական հայացքների առաջին արտացոլանքները: XIX դարի կեսին արևմտահայ իրականության մեջ արդեն գործում էին մի շարք հայ երաժիշտ–տեսաբաններ, որոնցից ոմանք նախապատրաստեցին եվրոպական կոմպոզիտորական արվեստի ներթափանցումը ողջ Արևելքի մշակույթ: Այս առումով կարող ենք ասել, որ Տիգրան Չուխաջյանը (1837–1898) առաջին հայ կոմպոզիտորն էր թե՛ հայ իրականության մեջ, թե՛ Արևելքում առհասարակ: Քիչ անց արևելահայ մշակույթում ի հայտ եկան մի շարք կոմպոզի-

տորներ, որոնք առավել խորացրին եվրոպական կոմպոզիտորական արվեստի արտահայտությունները հայ արվեստում: Այդ շարքում էին Քրիստափոր Կարա-Մուրզան (1853–1902), Մակար Եկմայանը (1856–1905), Նիկողայոս Տիգրանյանը (1856–1951) և ուրիշներ: Սակայն առաջինը Կոմիտասը հայ կոմպոզիտորական արվեստի բոլոր հիմնարար տարրերը կառուցեց հայ երաժշտության առանձնահատկությունների հիման վրա: Այս է պատճառը, որ թեև հայ առաջին կոմպոզիտորը Տ. Չուխաճյանն է, և այդ շրջանի մյուս հայ կոմպոզիտորները ևս հայ կոմպոզիտորական դպրոցի կայացման, ձևավորման փուլն են ներկայացնում, սակայն Կոմիտասն է, որ համարվում է հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը՝ որպես այդ ավանդույթի վերջնական տիպական դրսևորումների կայացումն իրականացնող հեղինակ:

Հայ կոմպոզիտորական արվեստի ազգային բնութագրերի հստակեցումը կապված էր ինքնության մի շարք առանցքային խնդիրների ձևակերպման, հայ ավանդական երաժշտական մշակույթի հետազոտման և այլ հարցերի հետ:

Այդ շրջանակի հիմնախնդիրներից մեկը հայ ավանդական երաժշտական մոնոդիկ մտածողության և եվրոպական բազմաձայն արվեստի օրինաչափությունների համաձայնեցման հարցն էր: Հայ կոմպոզիտորական դպրոցի կայացման սկզբնական փուլում այդ համաձայնեցումը արտացոլվում էր կոմպոզիտորական ստեղծագործություններում հայ ժողովրդական կամ հոգևոր մեղեդիների պարզ կիրառումից մինչև դրանց բազմաձայն մշակման մակարդակը ներկայացնող երաժշտական իրողություններով: Բոլոր այդ դեպքերում ազգային մեղեդիական նյութը կամ պարզորեն վերադրվում, կամ էլ, լավագույն դեպքում, հարմարեցվում էր մաժորամինոր հարմոնիկ համակարգի օրինաչափություններին:

Կոմիտասը խնդիր էր տեսնում բազմաձայն երաժշտության սկզբունքների այդ մեխանիկական փոխառությունների կամ հար-

մարեցումների մեջ: Հայ կոմպոզիտորական արվեստում բազմա-
ձայնության հիմնական սկզբունքները, նրա կարծիքով, պետք է
կառուցվելին հայ երաժշտական մտածողության առանձնահատկու-
թյունների հիման վրա: Սակայն անհրաժեշտ էր նախ հստակեցնել
այդ առանձնահատկությունները:

Կոմիտասի հետազոտությունների արդյունքում հազարամյակ-
ների պատմություն ունեցող հայ ավանդական երաժշտական մշա-
կույթի հիմնական ճյուղերից կարևորվեցին հատկապես հայ գեղջ-
կական երաժշտական արվեստն ու հայ միջնադարյան եկեղեցական
երգարվեստը: Դրանց ուսումնասիրությունը Կոմիտասին հնարավո-
րություն տվեց հասկանալու և տեսական հստակությամբ ձևակեր-
պելու հայ երաժշտության ձայնակարգային հենքի մի շարք առանձ-
նահատկություններ:

Հայ երաժշտության մոդալ տեսության հետագա զարգացման
գրեթե բոլոր փուլերը հենվեցին Կոմիտասի այս հետազոտություն-
ների վրա: Որպես երաժշտագետ անփոխարինելի եղավ նրա դերը
նաև հայ բանահավաքչության հետագա զարգացման պատմության
մեջ: Նրա հավաքած շուրջ չորս հազար ժողովրդական երգերից, ցա-
վոք, պահպանվել և մեզ է հասել գրեթե կեսը: Վերջապես, Կոմիտա-
սի երաժշտագիտական գործունեության կարևորագույն ոլորտը հայ
միջնադարյան երաժշտության, իսկ առավել կոնկրետ, խազային նո-
տագրության ուսումնասիրության դաշտն էր: Այդ համակարգի վեր-
ծանությունը դարձավ Կոմիտասի կյանքի կարևորագույն գործերից
մեկը: Իր ժամանակի որոշ հրապարակումներ հիմք են տալիս
պնդելու, որ հայկական խազերի վերծանությունը նա ավարտել էր և
պատրաստվում էր հրատարակել Գերմանիայում: Ցավոք, առաջին
համաշխարհային պատերազմն ամեն բան խառնեց, և այդ ոլորտի
հիմնական աշխատությունը հավանաբար կորավ: Ինչևէ, այսօր
խազագիտության բնագավառի բոլոր նոր ուսումնասիրությունները
դարձյալ հենվում են Կոմիտասի հետազոտությունների վրա: Թե՛ հայ

գեղջկական, թե՛ միջնադարյան արվեստի ուսումնասիրությունը, նոր տեսական համակարգերի մշակումը թույլ են տալիս Կոմիտասին համարելու հայ երաժշտագիտության արդի փուլը ձևավորող տեսաբան:

Մյուս կողմից, որպես կոմպոզիտոր, իր տեսական հայտնագործությունների կիրառմամբ բազմաձայն մտածողության նոր մոդելի մշակումը Կոմիտասն իրացրեց իր ստեղծագործություններում: Այս տրամաբանությամբ միայն կարելի է հասկանալ Կոմիտասի՝ ոչ-տերցիային կառուցվածքի ակորդների ողջ համալիրի ստեղծումը, դրանց կիրառությամբ հարմոնիկ ուրույն դարձվածաբանության և ձևակառուցողական նոր մոտեցումների կերտումը և այլն:

Եթե նկատի ունենանք, որ հայ երաժշտական ավանդական մտածողությունը միամեղեդային (մոնոդիկ) էր, ապա բազմաձայնեցիս, հարմոնիկ լեզվի նորարարություններին առնթեր, դրան առավել հարմար էին համարվում բազմաձայն գծային մտածողության ձևերը: Երաժշտական մտածողության այս տեսակն ու հայ ավանդական երաժշտության ոչ-օկտավային կառուցվածքի ձայնակարգերը (լադեր) հնարավորություն տվեցին իր մի շարք ստեղծագործություններում կիրառել պոլիլադայնություն:

Փաստորեն, Կոմիտասը որպես կոմպոզիտոր և տեսաբան մշակեց հայ բազմաձայն երաժշտական մտածողության բոլոր հիմնական տիպական տարրերը: Հայ երաժշտության զարգացման պատմական հեռանկարի մեջ Կոմիտասի արածը խիստ եզակի էր: Նրան հաջողվել էր ստեղծել երաժշտական մտածողության մի համակարգ, որը խիստ տիպական էր հայ ժողովրդի ավանդական մտածողության առանձնահատկությունների տեսանկյունից, մյուս կողմից՝ բացարձակապես այլ տեսակի մի համակարգ էր, որը երբևէ այս ժողովուրդը չէր կիրառել իր երաժշտական ավանդույթում: Հայերն այդպես երբեք չէին մտածել, բայց նրանց բազմաձայն

երաժշտական մտածողության ամենատիպական արտահայտությունը հենց դա էր:

Հայ կոմպոզիտորական արվեստի տիպական հիմնադրույթները մշակելուց և այդ արվեստի հիմնադիրը լինելուց զատ՝ նա հայ երաժշտության խնդիրների ընկալումն ու գեղարվեստական լուծումները համադրեց XX դարասկզբի եվրոպական ամենանորարարական միտումներին: Հենց երաժշտական լեզվի նորոգության տեսանկյունից նա կարող է ներկայանալ որպես XX դարասկզբի երաժշտական մտածողությունը վերափոխող կոմպոզիտոր-տեսաբաններից մեկը, որին հաջողվել էր իր խիստ ուրույն երաժշտական համակարգը մշակել:

Կոմիտասի նորարարական մոտեցումներն այսօր էլ արդիական են հայ երաժշտության ժամանակակից հիմնահարցերը լուծելիս: Այս է պատճառը, որ հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասը նաև հայ նորարարական արվեստի հիմնադիրն է:

Հայ ավանդական երաժշտական մշակույթի հիմնական ճյուղերի ուսումնասիրությունը, հայ երաժշտական մտածողության հիմնական առանձնահատկությունների հստակեցումը, հայ կոմպոզիտորական արվեստի հիմնական սկզբունքների ձևակերպումն ու նոր բազմաձայն լեզվահամակարգի մշակումը Կոմիտասն իրականացրեց հայ ժողովրդի ինքնության հարցերի լայն համատեքստում, ինչը նրան դուրս բերեց սոսկ երաժշտական արվեստի շրջանակներից և դարձրեց հայ ժողովրդի պատմության նորագույն փուլի ամենախոշոր գործիչներից մեկը:

Մհեր Նավոյան

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

KOMITAS
HIS ROLE AND SIGNIFICANCE FOR THE HISTORY
OF ARMENIAN CULTURE

(instead of a preface)

Komitas was the founder of Armenian art music school. It's worth mentioning that the Armenian school was the first national art music school among the eastern cultures. This was the role he played in the history of Armenian music. To better comprehend this definition, we need to refer to the process of penetration of European art music principles into those of Armenia and their subsequent adaptation to Armenian music.

It is quite obvious that when speaking about Armenian art music, a certain process of rethinking and reorganizing of professional traditions inherent in Armenian musical culture should be implied. The roots of Armenian professional music can be traced back to the temple music of the pre-Christian era and its numerous manifestations existed in Armenian Church music since the Middle Ages. In the 18th century, theoretical principles of European music started to emerge in the works of Armenian music theorists. By the middle of the 19th century, some of them were already actively working in Western Armenian culture, including those who laid the ground for the penetration of European music into Eastern culture in general. In this regard, it can be argued that Tigran Chukhajian (1837–1898) was the first composer not only in Armenian culture but in the entire Middle Eastern region. Those composers, who appeared later in the Eastern-Armenian culture, had deepened the integration of European music tradition with Armenian music. Among them were Kristapor Kara-Murza (1853–1902), Makar Yekmalyan (1856–1905), Nikoghayos Tigranyan (1856–1951), and many others. Yet only Komitas succeeded in building the cornerstones of Armenian art music upon the distinctive characteristics of Armenian music. That is why, although Tigran Chukhajian and other

Armenian composers of that time represent the formative stage in the history of the Armenian school of composition, Komitas is considered the founder of Armenian art music and the inventor of its definite and typical manifestations.

The systematization of national characteristics of Armenian art music was related to defining several fundamental identity issues, along with the studying of Armenian traditional music culture, and to several other problems.

One of the major challenges in this regard was the integration of Armenian traditional monodic music with the principles of European polyphony. At the initial stage of the formation of the Armenian school of composition, such integration was manifested in the works of composers in different ways, varying from a simple use of Armenian folk songs or sacred chants to more complex polyphonic transcriptions. In both cases, the national melody was either simply exposed, or at best, adjusted to the rules of the major/minor harmonic system.

Komitas considered such mechanical borrowings or adaptations of polyphonic music principles as deficient. He strongly believed that the polyphony in Armenian music should be grounded on the features of Armenian musical thinking. However, it was necessary first and foremost to determine those features.

Komitas's research resulted in identifying the main branches of traditional Armenian musical culture, which span several millennia, particularly Armenian peasant music and medieval sacred chants. A thorough study of those genres enabled Komitas to determine and clearly articulate several fundamentals of modal Armenian music.

In fact, all stages of further development of the modal theory of Armenian music were based on Komitas's research. As a musicologist, he also played an outstanding role in the history of Armenian ethnography. Unfortunately, only half of nearly four thousand folk songs he collected

have survived. Finally, the most important area of Komitas's investigation was related to medieval Armenian music, particularly to *khaz* (Arm. խաչ – *xaz*) neume notation. Decoding that system was one of Komitas's major goals. Some of his writings suggest that he had completed the investigation of the *khaz* system and was about to publish the results in Germany. Unfortunately, the First World War interfered with his plans, and the principal work in that field was probably lost. Nevertheless, contemporary studies of *khaz* notation are still based on Komitas's research. His investigation of both Armenian peasant and medieval church music, along with the development of new theoretical systems, allows us to consider him a theorist who laid the foundation for contemporary Armenian musicology.

On the other hand, Komitas's theoretical discoveries enabled him to develop a new model of polyphony, which he introduced in his music as a composer. Therefore, only within that logic, it is possible to understand his invention of an entire complex of non–tertian chords, which created a new harmonic phraseology, morphological approaches, etc. Given that traditional Armenian musical thinking was monophonic (*monodic*), the linear types of polyphonic thinking were considered most appropriate for polyphonic transcription, along with the innovations in harmonic language. This model of musical thinking, together with the non–octave structures of the modes of traditional Armenian music, enabled Komitas to introduce polymodality in some of his works.

As a composer and theorist, Komitas elaborated all major typical components of Armenian polyphony. From the historical perspective of the development of Armenian music, Komitas's work was totally unique. He successfully established a system of musical thinking which was entirely typical to the traditional thinking of Armenian people and, at the same time, completely different from what Armenian people had ever used in their music. Never before was that kind of thinking common for Armenians;

however, Komitas's system became the most typical expression of Armenian polyphonic music.

Apart from developing the characteristic principles of Armenian art music and becoming its founder, Komitas compared the perception of the objectives inherent in Armenian music and their artistic solutions with the most innovative European trends of the early 20th century. In terms of musical language innovations, Komitas can be considered one of the theorist-composers of the early 20th century who managed to reinvent conventional musical thinking, resulting in the development of an original musical system.

Innovative principles elaborated by Komitas are still relevant for solving challenges in contemporary Armenian music. This is why this pioneer of the Armenian art music school is also considered the founder of Armenian innovative (or *avant-garde*) music.

Komitas initiated the examination of the major branches of traditional Armenian music and identified the main features of Armenian musical thinking. He also clarified the basic principles of Armenian art music along with the elaboration of new polyphonic musical language system. All this was done within the broad context of Armenian national identity issues. Thus, Komitas stepped outside the boundaries of music alone and became one of the most prominent figures in modern Armenian history.

Dr. Prof. Mher Navoyan